

ԳԻՐԳ ԵՒ ՄԱՄՈՒԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ

Ի՞նչ է տեղի ունենում Հայաստանում, գրական ի՞նչ նոր երեւոյթներ կան, ի՞նչ գործեր են կատարում, ի՞նչ նոր գիրքեր են լոյս տեսնում, — արտասահմանը շարունակում է մնալ բոլորովին անտեղեակ: Պատահական լուրերը, որ մերք ընդ մերք փաշում են «նորի. Հայաստան»-ից, ո՛չ մի գաղափար չեն տալիս եւ դժբախտաբար, շատ հեռու են միսիքարական լինելուց:

Իրրեւ լուսաւոր երեւոյթ արձանագրեմք այն տեղեկութիւնները, որ վերջերս տրեցին Հայաստանի Հանրային Մատենադարանի մասին: Մատենադարանը այժմ ունի մօտ մէկ ու կէս միլիոն հատոր գիրք: Իր հազագիւտ հատորների եւ ձեռագիրների բաժնում գտնւում են «Ուրբաքագիրք կամ Պարգատմար Հայոց»-ը, որ տպւած է 1512 թւին, «Աղեքսանդր Մակեդոնացիի ար-

շաւանքները եգիպտոսի վրա», տպւած 15րդ դարում, Սուլթան Սէլիմի բանաստեղծութիւնների արաբերէն հաւաքածուն, տպ. Բերլինում, բազմաթիւ հայերէն, արաբերէն եւ այլ լեզուներով գրւած քանկարժէք ձեռագիրներ եւայլն:

Հայաստանի Մատենադարանը ստանում է հոբիթդ. Միուրեան սահմանելու լոյս տեսնող բոլոր հրատարակութիւնները, 30 լեզուներով, իսկ արտասահմանից՝ 10 լեզուով պարբերականներ: Անցած տարւանից սկսած հրատարակում է մատենացոյցներ զանազան նիւթերի մասին: Կազմակերպում է նաեւ պարբերական ցուցահանդէսներ հայերէն եւ օտար հրատարակութիւնների:

Այս տարւանից Մատենադարանը փոխադրւելու է իր նոր շէնքը համալսարանական քաղամասում:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՕՐԱՅՈՅՅԸ

Համազգայինի հրատարակած օրացոյցները տարւել — տարի ձեռնարկում ու կատարելագործում են: Այս տարւանը ներկայացնում է 366 էջանոց մի պատկառելի հատոր, ոչ թէ պատի, այլ սեղանի վրա դրելու համար: Բացի զուտ օրացուցային մասերից՝ հատորը բովանդակում է բազմաթիւ ժամանակագրական — պատմական տեղեկութիւններ, գրական — մշակութային պատմական գիտելիքներ, հատուկներ գրական — պատմական երկերից, բանաստեղծութիւններ Գանիէլ վարուժանից,

Սիւսանքոյից, Յովհ. Թումանեանից, Լեւոն Շանթից, Վ. Տէրեանից, Ե. Զարեանից եւ շատ ուրիշներից: Առաջ են բերւած Գ. վարուժանի «Հացին երգ»-ը, Լ. Շանթի «Լեւոն աղջիկ»-ը, Հր. Ասատուրի «Գիմաստերներ»-ը: Հարուստ է կենսագրութիւնների բաժինը: Առհասարակ, գիրքը կազմւած է մեծ խմբով: Հաշակ ու սէր կալ նիւթերի ընտրութեան մէջ: Իր տեսակում աննախընթաց գործ է եւ ցանկալի է, որ լայնօրէն տարածւի հայերէն կարդացող բոլոր խւերի մէջ: